Ցետոյ լուսանցքին վրայ առ ի շեղ գրուած է հետևեալը.

Որպէս և յառաջ ևս գրեցաք քեզ, և դարձեալ գրեմ, զի զոմանս իբս հարկաւորս խնդրեցաք ի յԱբրահամ Վարդապետէն, զի առնուցու. վասն որոյ ահա պատուիրեմ քեզ. որոց զգինսն ևս տացես Աբրահամ Վարդապետին. հալբաթ։

ՄԽԶ.

Նալեան Պատրիարքի հրաժարման և անոր յաջորդ Գրիգոր Գ.ի ընտրութեան շուրջը կը դառնան հետևեալ պատմական վաւերագիրները։

Ա.

Գերամեծար գերյարգելի Աբբայ հօր մերոյ
և բարեմնայելի տեառն տեառն Ստեփաննոս վրդ.ի, ողջոյն

Թղթ. ԽԸ

... Ի մայիսի 14, Յակոբ պատրիարգն կոստանդնուպօլսոյ, յետս եկաց ի պատրիարգութենէ. և եդ փոխան իւր զգրիգոր վարդապետն երուսաղեմայ պատրիարքին վէքիլն. զի սարգիս վարդապետն հրաժարեցաւ ի լինիլ պատրիարք։ Նոյնպէս և սամուէլ վարդապետն, թէպէտ բազումք զնա խնդրեալ են, այսինքն զսամուէլ վարդապետն, սակայն նա ասացեալ է. Ես ձեզի ձեռք չեմ խտար. քանզի ընդ լինիլս պատրիարգ, փէշին իրեք տէրտէր աստուածածնայ ժամուն, դին կուտամ։ Դարձեալ, եթէ մէկի մը համար իրիճայ ընէք թէ տէրտէր ըրէ, մարդ ընող մարդ չեմ. խաթրերնիդ չեն [չեմ] նայիր։ Դարձեալ, ինչպէս մեծին խաթրը, նոյնպէս աղքատին խաթրը կը նայիմ. աչառութիւն չեմ ըներ։ Էյէր ասանկ ձեռք կուտայ ձեր բաժին է, ըրէք ևս պատրիարգ։ Այպա զվերոգրեալ գրիգոր վարդապետն, որ հեզ և միամիտ ոմն է, զնա արարին պատրիարգ։ Բայց մինչ չև էր զգեցեալ նորա զկապայ, ժողովուրդն ոչ կամէր զնա, զի բազումք ասէին թէ՝ և նա յօհաննէս պատրիարգին չըրախն է. զի յօհաննէս պատրիարգին չրախները՝ ամէնքը կաթոլիկ են։

Այպա ի մայիսի, 26 յաւուր շաբաթու՝ զգեցաւ կապայ վերոգրեալ գրիգոր վրդ.ն և եղև պատրիարգ կոստանդնուպօլսոյ։ Ասեն բազումք, թէ յակոբ պատրիարգն ի տալն իշխանութիւն Գրիգոր վարդապետին, ասացեալ է նմա բազում բանս. և զայս ևս, լալով. Ես աս աթոռուս դաթերը համար, չատ մարդու տուն քակեցի, չատ մարդու զարար տվի. անա՞պ աստուծոյ աչեղ տիվանը ի՞նչ ճուղապ պիտի տամ։ Քեզ տեսնեմ թէ ի՞նչպէս պիտի կառավարես զեկեղեցին ևն.։

1764 ի յունիս 19 — Ն. Տ. Հ. Յակոբոս Վ. Զամչեանց
[Կ. Պոլիս] — Մխիթարեան

ՄԽԷ.

Բ.

Գերապատիւ և ամենապայծառ տեառն Ստեփաննոսի ևն.

... յաթանաս վարդապետէն գիր առի, յորում գրէ զայս նոր, զի հայոց պատրիարգն յոյժ հիւանդացեալ է. ուստի եկեալ են յամենայսա բազմութիւնք եպիսկոպոսաց. բազումք ջանացեալ են լինիլ պատրիարգ ոչ վասն սնափառութեան, որչափ վասն հալածելոյ